ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 57

«02» սեպտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ(ԲՆԱԿԱՎԱՅՐ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ), ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐՏԻՆ ԱՂՎԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Մարտին Աղվանի Սարգսյանը, իր 2019 թվականի հուլիսի 24-ի դիմումի համաձայն ընդունել է Հայսատանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայրում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-080-0008-0004 կադաստրային ծածկագրով 0.1 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան շինության և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանարապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայքնի Մեծ Սարիար բնակավայրում գտնվող համայանքի սեփականություն հանդիսացող 08-080-0008-0004 կադաստրային ծածկագրով 0.1 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 164.23 քառակուսի մետր ներքին և 197.21 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան շինությունը (վկայական N02072019-08-0032 հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք, գյուղ Մեծ Սարիար 10-րդ փողոց, թիվ 10) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 404350 /չորս հարյուր չորս հազար երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ արժեքով վաճառել կառուցապատողին՝ քաղաքացի Մարտին Աղվանի Սարգսյանին (անձնագիր՝ AP 0498062, տրված 22.07.2016թ, 001-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք, գյուղ Մայիսյան 1-ին փողոց, տուն7) վաճառելու համար:

2. Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------

ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«02» սեպտեմբերի 2019 թվական

գյուղ Մայիսյան